ՈՒՍՈՒՑԻՉ

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

...но одиночество, но невыносимое рабство
учительскаго званія, но болѣзнь неотступная...

ТУРГЕНЕВЪ. Томъ I.

I

Անցաւ կէսգիշեր. բակումն աքաղաղ
Այս երկրորդ անգամ հաշւում է ժամեր.
Քնեցէք ամենքդ հանգիստ ու խաղաղ—
Ուսուցչին միայն չը կայ կէսգիշեր։
Դեռ ո՛րքան նորան դործ է ըսպասում.
Տետրակներն, որպէս բըլուր բարձրացած՝
Անհամբեր իրանց հերթին են նայում—
Դէ՛, շո՛ւտ, մի՛ կանգնիր՝ մօտ է լուսաբաց։
Եւ գըրում է նա... Ո՞ւր է թէ մի տաք,
Գոնէ, սենեակում նըստած նա լինէր.
Նոքա գըրիչը շարժւում է արագ,
Բայց աւելի շուտ շարժւում են ոտներ...
Հանգչում է լապտեր. գուրսը կատաղած
Նորից նոր ուժով շընչում է քամին,
Եւ դեռ իւր գործի վերայ խոնարհած՝
Դողում է, սառչում ուսուցչի մարմինն.
Ու թո՛ղ նա սառչի.—կայ մի վառ կըրակ,
Որ ոյժ է տալիս նորան այս գիշեր,

Որ այրում է միշտ նորա կրծքի տակ՝
Ձեր սէրն է այն, խեղճ, թշուառ մանուկներ...

II

«Է՛հ, մընաք բարեաւ հիմա, իմ փոքրիկ.
Ես տուն եմ գընում այս երկու ամիս,
Դուք չէք մոռանալ, գիտեմ, ձեր դասերն
Երբեմն յիշելու դաշտում խաղալիս։
Ես կը գնամ, կը գամ, մի՛ լաք, իմ փոքրիկ,
Կը տեսնենք իրար կալոցին շուտով.
Ծերուկ մայրս ինձ է նայում տնհամբեր.
Դէ՛, վերջին անգամ մընացէ՛ք բարով»։

—

Դանգաղ քայլերով՝ լերան կողերից
Առաջ է գընում ուսուցիչն անձայն,
Արտասուքն առատ վազում է աչքից
Եւ ծանրը հազը խեղդում է նորան։
Մաշուած, դալկացած նա յետ է դարձնում
Գէմքը դէպի գիւղ. բայց գիւղն ամպերով
Փաթաթուած արդէն այլ չի երևում.—
«Օ՛, գիւղ, մանուկնե՛ր, մընա՛ք դուք բարով»։

—

Եկել է վաղուց ու անցել կալոց.
Ծընող, մանուկներ գալիս են գըպրոց,
Գալիս են, կանգնում դըրան առաջին
Ու լուռ և անձայն յետ դառնում կրկին.
Տըղայքն ամեն օր գընում են հեռու
Հեռու գիւղից դուրս, նայում են լալով.
«Զը կայ, ինչ եղաւ. արդեօք ուր ես դու,
«Անգի՛ն ուսուցիչ, դու էլ կաց բարով...»

III

Թափառիր... ու թող չը լինի անկիւն,
Ուր յոգնած մարմինդ հանգչէր մի վայրկեան.—

Նչ ո՛վ կը լէշէ Թըշուառ մարդկութիւն՝
Գիւղերում կորած, ձըգւած անպաշտպան։

—

Տե՜ս, հեռու այնտեղ՝ սարի ծերպերում,
Կըպչում են ժայռին մռռացւած որջեր,
Մարդիկ են այնտեղ գարերով ապրում,
Եւ ա՛յն՝ քո արիւն, քո հարազատներ։

—

Ապրում են... Քանի՜ անգամ սանձարձակ
Ես լաց եմ եղել այդ խըրճիթներում,
Ուր սև օրն անցնում է սև ծածկի տակ,
Ուր թանձր, անթափանց խաւար է տիրում։

—

Գնա՛, Թափառէ՛ր.—լուսոյ, գիտութեան
Ծըրագ է այնտեղ հարկաւոր վառել,
Հարկաւոր է ձեռք մեկնել մարդկութեան,
Մութ խորխորատից ընկածին հանել։

—

Զօրացէ՛ք, ոտնե՛ր անզօր, երերուն,
Ո՛յժ առ, չարչարւած կուրծք ուսուցչական—
Կը գայ օր, կը գայ և ձեզ մի անկիւն
Կը բերէ, որ գուք հանգչէք յաւիտեան։

IV

Մութ անկիւնում հեծում է նա. հէ՜գ Թըշուառ,
Զուր ես յիշում ծնող ու տուն հայրական.
Ուշ է հիմա. չարչարւելով քեզ համար
Վաղուց մըտան ծընողներդ գերեզման։
Եւ հայրենի լթողած անտէր քո ընակ
Կանգնած է այժմ ծերուկ գըլուխն անպաշտպան,
Ու հեռու չէ, գուցէ, և այն ժամանակ,
Երբ նա նոյնպէս կը կործանւի յաւիտեան։

—

Հեծիր, հեծիր... Միթէ այսքան տարիներ
Զը հիւսեցիր դու մի տեղ բոյն սեպհական,
Միթէ չ'եղաւ քեզ ցաւակից մի ընկեր,
Միթէ անվերջ թափառէլ ես դու միայն։
Ո՞ւր են նոքա, որոնց որդւոց, որպէս հայր,
Նուիրեցիր ամբողջ կեանքդ մինչ այդ օր,
Չէ՞ որ սրբել ես դու արցունք անհամար
Ու ամոքել ցաւ ու վշտեր բիւրաւոր։

—

Հեծիր, հեծիր, լաց, արասաւէ—քո կրսկիծ
Դա կը մեղմէ, միայն ըզգոյշ ու կամաց,
Ապա թէ ոչ քո կրտրատուած թոքերից
Նորից կ'երթայ արեան աղբիւրն հեղեղուած,
Նորից կը գան ու կը թափուին բեկորներ,
Կը կատաղի կրծքիդ ցաւը սաստկագին,
Եւ ո՞վ պիտի սրբէ քո կուրծք ու շուրթեր,
Ո՞վ կը մաքրէ արնաշաղախ անկողին...

V

Պրճնում է մայիս. պարտիզիս միջին
Կանաչում են սէզ և թուփ և ծառեր,
Եւ բաց է անում ծաղիկ-թագուհին
Համեստութիւնից կարմրած թերթեր։
Եւ նստած եմ ես ու անձայն դիտում
Մարգարտեայ կաթիլն, որ թրփի վերան
Երբեմն վառւում է, որպէս քրքում
Ու երբեմն, որպէս արցունք կուսական,
Փայլում է պայծառ կախուած տերևից.
Եւ փայփայում է լրսեալիքս հեռուից
Անոյշ տաղերով մեղմաձայն առուն,
Եւ յաւերժական օրհներգն ոգելից
Ծառի ճիւղերում երգում է թռչունն։
Եւ ահա, ահա թաղուած ըզդացմունք

Տարիներ առաջ խաղաց հոգուս մէջ,
Ահա բացուեցան կարկամած շրթունք՝
Բորբոքուած լուսոյ կրակովն անշէջ...
Ու երգում էի ես երկար երկար՝
Մոռացած և՛ նենգ և՛ թոյն և՛ արիւն—
Ես երգում էի ապագայ աշխարհ,
Ուր ծաղկելու էր կեանքն, որպէս գարուն։

VI

Ցիշում է մէկն ինձ. ականջիս միջին
Լսուում է մի սուր հընչիւն զանգակի.
Ո՞վ պիտի յիշէ աղքատ ուսուցչին՝
Հեռու մոռացուած կեանքից աշխարհի։
Վաղուց չէ հասնում խոր գերեզմանից
Ձայնը ծնողիս. չ՝ունիմ ես քոյրեր,
Եղբայր, ազգական, իսկ կանանց սեռից
Ոչ ոք ժրպիտով չէ նայել ինձ դեռ։

—

Բայց հընչում է ձայնն ուժգին ու կրկին.
Ա՛խ, ասա՛, ասա՛. արդեօք ո՞վ ես դու,
Որ այս լուռ, հանգչած գիշերուայ ժամին
Միտդ ես բերում ինձ. մօտիկ ես, հեռու,
Վաղուցուայ ծանօթ, ընկեր մանկութեան,
Ցաւակից օտար, անծանօթ, անտես,
Թէ այլ ուսուցիչ, անքուն ինձ նման
Ու խեղճ, մոռացած, կորած որպէս ես...

VII

Ահա տեսնում եմ կրկին այն տապան,
Առանց վիմաքար նա այժմ անպաշտպան
Ցրուած է հեռու քարերի խրմբից.
Հետք էլ չի մընայ շուտով նորանից։

—

Տարիներ առաջ սորանից՝ մի օր,
Երբ միայն երկինքն էր մութ, սրգաւոր,
Քանի մի հոգով յանձնեցինք հողին
Մենք տարաբաղդիկ ուսուցչի մարմինն։

—

Ծանր էր, ծանր այն խաչն, որ երկար օրեր
Կրում էր նա իւր ուսին անվեհեր.—
Թող միայն ապրէր, ծաղկէր գործն, որին
Նա զոհ էր բերել մարմինն ու հոգին։

VIII

Հընչում է զանգակն ու մանուկ ամբոխ
Վազում է ուրախ ուրախ դասարան...
Անցան տարիներ, բայց դեռ չեմ կարող
Ես հանել սրրտից այդ զանգակի ձայնն։
Ու Աստուած դիտէ, պիտի գայ մի օր,
Երբ ես հաւաքած ոյժ ու զօրութիւն
Զրսպեմ սրրտիս մէջ ցաւեր բիւրաւոր
Եւ, որպէս օտար, լրսեմ այդ հընչիւն։
Սիրում եմ ես այն արգեօք թէ ատում—
Չը գիտեմ.—միայն երբ առաւօտեան
Աղջամուղջն է դեռ աշխարհը պատում,
Ես դրպրոցի մօտ կանգնած եմ անձայն։
Կանգնում եմ անշարժ, երկար, միայնակ,
Չը կայ ոչ մի շունչ չորս կողմս այդ ժամին,
Եւ գողդողում եմ ես իբր աւազակ
Ու սիրտս բաղխում, խրփում է ուժգին։
Անցնում են ժամեր. իրար յետևից
Մանուկ, ուսուցիչ գալիս են ահա,
Ու ես իմ հեռու, անտես անկիւնից
Համբր ողջոյններ տալիս եմ նոցա։
Հընչում են կրրկին զանգակն... Ու յանկարծ
Խեղդում է կոկորդս անձայն հեծեծանք,

Թափուում է արցունքս առատ հեղեղուած,
Վառելով հոգուս կրսկիծ ու տանջանք...
Օ՛, անցա՛ք, անցա՛ք, երջանի՛կ օրեր,
Երբ ամբողջ քրսան տարի շարունակ
Ուղղում էի ես իմ ըշտապ քայլեր
Դէպի որոշած կեանքի նրպատակ։
Չը կայ հիմա այն... Իբր անպէտք ապրանք
Ինձ գուրս ձրդեցին պաշտածրս շէմքից.
Կորան ինձ համար հանգիստ ու բերկրանք՝
Ես դադարեցայ ապրել այն օրից։
Ու այժմ ալևոր, ջախջախուած սրրտով
Երանի եմ տալիս ամենին.
Մահն էլ չի գալիս փրրկել ինձ շուտով—
Միթէ ե՞ս էի Աստծոյ ատելին։

IX

Քե՞զ ողբամ ես, կո՛յս, որ սրրտիդ խորքում
Թագցրնում ես սէրդ անթիւ չարերից,
Որ չարչարուում ես մութ անկիւններում,
Որ լաց ես լինում ծածուկ ամենից,
Որ հազիւ երբեմն ահով երկիւղով
Տալիս ես համբոյր սիրած աչերիդ,
Որ ոչ այժմ ունիս օրեր անվրրդով
Եւ ոչ ապագայ մօտիկ, առաջիդ...

—

Ի՞նձ ողբամ ես, կո՛յս, որ թոյլ և անզօր՝
Չեմ փրրկում ես քեզ այդ գառրն կեանքից,
Թէպէտ պատառուում է սիրտս ամեն օր,
Թէպէտ այրում են ինձ ցաւ ու կրսկիծ։
Եւ ես քեզ նրման, որպէս մի յանցանք,
Թաղում եմ իմ մէջ ըզգացմունք սրրտիս.
Ես էլ ոչ հիմա ունիմ խաղաղ կեանք
Եւ ոչ ապագայ մօտիկ, առաջիս...

X

Թող ինձ ճընշեն ցաւ ու հոգսեր· ամեն օր
Չը հեռանայ դէմքիցս ըստուեր տըրտմութեան,
Ներկայ, անցեալ թող ինձ ցոյց տան ահաւոր
Ապագայի դէմքը խոժոռ ու դաժան,
Խաչը կեանքի թող ուսերիս ծանրացած
Չը տայ հանգիստ վաստակաբեկ իմ մարմնին,
Թող ես լինիմ բոլորից էլ հալածուած՝
Ոտների տակ ձըգուած էակ մի չընչին։

—

Բայց կայ մի տեղ... Ես ամենայն առաւօտ
Անց եմ կենում նըւիրական այգ շէմքից·
Ոչ մի անարգ չի վըստահիլ իւր նենգ ոտ
Դընել այնտեղ սըրբապըղծուած աշխարհից։
Այնտեղ պատում են իմ շուրջըս մանուկներ,
Ժըպիտ, ծիծաղ գուրգուրում են իմ հոգին,
Անմեղութեամբ փայլատակում են աչեր
Ու փայփայում են ինձ երգեր քաղցրագին։

—

Ու չեն ճընշում այլ ինձ ցաւեր· և իսկոյն
Հեռանում է դէմքիցս ըստուեր տըրտմութեան,
Ներկայ, անցեալ ցոյց են տալիս ինձ փայլուն
Ապագայի դէմքը պայծառ, աննըման.
Խաչը կեանքի ուսիս վերայ թեթևցած
Թոյլ է տալիս հանգչել տանջուած իմ մարմնին.
Ես ըզգում եմ, որ ամենից եմ սիրուած,
Որ գերագոյն մի էակ եմ առանձին...

XI

Մի՛ յուսահատուիր, դըժբա՛ղդ ուսուցիչ,
Երբ տանջւում է սիրտդ, երբ ամենայն ինչ՝
Կեանք, բաղդ կորած ես կարծում քեզ համար՝
Մի՛ յուսահատուիր, մի՛ տըրտմիր, մի՛ լար։

Թող կորչի այդ բաղդն, որի յետևից
Ընկած է այսօր մարդոց բազմութիւն—
Նորա պարգևած ամեն մի տուրքից
Կաթում է անմեղ արցունք ու արիւն։
Թող այդ վայելեն ուրիշները, որոնց
Հրճուանք է տեսնել տանջանքը մարդոց,
Որոնց համար կոծ, աղաղակ ու լաց՝
Երգեր են, պտրեր ուրախ հարսանեաց։
Դու այդ չես ուզում... Դու ուզում ես կեանք
Ուրախ, երջանիկ, ուզում ես գու սէր,
Որի խաղաղիկ հովանոցի տակ
Գրրկւած, փաթաթւած աշխարհը խրմբւէր։

—

Բայց յիշիր.—դարեր առաջ մեզանից
Քարոզում էր այդ մի Մեծ Ուսուցիչ,
Որ հրրաժարւած կեանքից գրլխովին
Ամեն ինչ զոհեց իւր գաղափարին.
Որ անտուն, անտեղ, որ հալածական
Անցաւ գիւղից գիւղ, քաղաք քաղաքից,
Որ չ'ունէր հանգիստ և ոչ մի վայրկեան,
Որ ուտում էր միշտ Աստծոյ սեղանից.
Որ հեզ և անձայն հարւածների տակ
Հալածողներին նայում էր սիրով,
Որ դատապարտւած, որպէս աւազակ՝
Աւանդեց հոգին ներիչ խօսքերով։
Եւ տարածւեցաւ Նորա խօսքն աշխարհ...
Ու լուսազարդւած ազգեր անհամար
Վազեցին այն հողն, այն հետքը լիզել,
Որտեղ վերայ Նա սէր էր քարոզել...

Ալէքսանդրոպոլ. 1889 թ.